**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

**«_____» _____ 2022թ.** **N_____Ա**

**ՈՐՈՇՈՒՄ**

**«ԵՐԵՎԱՆԻ Հ. 171 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2021 թվականի հունվարի 20-ի N17-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետը՝

**Երևան քաղաքի ավագանին որոշում է.**

1. «Երևանի հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչել հայ շախմատիստ, միջազգային գրոսմայստեր, համաշխարհային շախմատային օլիմպիադայի չեմպիոն Կարեն Ասրյանի անունով՝ «Երևանի Կարեն Ասրյանի անվան հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ԵՐԵՎԱՆԻ Հ. 171 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Երևանի հ.171 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայ շախմատիստ, միջազգային գրոսմայստեր, համաշխարհային շախմատային օլիմպիադայի չեմպիոն Կարեն Ասրյանի անվամբ անվանակոչելու վերաբերյալ հարցը քննարկվել է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններում, արժանացել հավանության:

Կարեն Ասրյանը ծնվել է 1980 թվականի ապրիլի 24-ին Երևանում: Առաջին կարգային դարձել է 6 տարեկանում, ինչը շախմատային աշխարհում համարվում է բացառիկ ցուցանիշ: 1990թ. Լենինգրադ քաղաքում անցկացվող պատանիների աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում լրացրել է վարպետության թեկնածուի նորման: Եթե աշխարհի չեմպիոններ Կարպովը վարպետության թեկնածու է դարձել 11 տարեկանում, Կասպարովը՝ 13, ապա Կարենը վարպետության թեկնածուի կոչմանն արժանացել է 9 տարեկանում: 1996թ. սեպտեմբերին նրա անհատական գործակիցը եղել է 2310, իսկ մոտ 2 տարի անց նա այն հասցրել է 2600-ի, այսինքն վաստակել է 290 կետ, որն արժանի էր Գինեսի ռեկորդի: 1996թ. Կարենը շախմատի աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովի նախաձեռնած միջազգային մրցաշարում նվաճել է «Կասպարովի գավաթը»: 1998թ-ից նա կրել է գրոսմայստերի տիտղոս: Երեք անգամ (1999, 2007, 2008թթ.) նվաճել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Հաղթել է «Տիգրան Պետրոսյանի» (1996, 1997, 2004թթ.) անվան և այլ միջազգային մրցաշարերում: Հայաստանի հավաքականի կազմում 2006թ-ին Թուրինում նվաճել է շախմատի համաշխարհային օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը: Եղել է համաշխարհային օլիմպիադաների (2002, 2004թթ.), աշխարհի թիմային առաջնությունների (2001, 2005թթ.) բրոնզե մեդալակիր, Եվրոպայի թիմային առաջնության (2007թ.) արծաթե մեդալակիր: 1996թ. երևանյան օլիմպիադայում ցույց տված լավագույն արդյունքի համար 16-ամյա Կարենն արժանացել է ոսկե մեդալի: Նա բազմիցս տեղ է զբաղեցրել աշխարհի հարյուր լավագույն շախմատիստների ցուցակում: Այդպիսի տեղ նա ուներ նաև իր մահվան պահին, երբ նրա միջազգային վարկանիշը 2630 էր: Կարենն իր ամենաբարձր ԷԼՈ վարկինիշին՝ 2646, հասել է 2006թ-ին: 2005թ. Իսրայելի Բեերշեվա քաղաքում անցկացված աշխարհի թիմային առաջնությունում գրավել է առաջին տեղը և արժանացել ոսկե մեդալի: Մարզական ակնառու հաջողությունների համար Կարեն Ասրյանը պարգևատրվել է «Մովսես Խորենացի» և բազմաթիվ այլ մեդալներով: Գործնականում, լինելով անպարտելի, Կարենը փնտրված շախմատիստ էր թիմային մրցաշարերում: Հայաստան, Ֆրանսիա, Ռուսաստան, Իրան... ահա ոչ լրիվ ցանկն այն երկրների, որոնց ակումբները մեծագույն սիրով հրավիրում էին նրան խաղալու իրենց շարքերում և, որպես կանոն, այդ ելույթներն ավարտվում էին հաջողությամբ: Չնայած իր երիտասարդ տարիքին՝ Կարենն արդեն նաև հմուտ մարզիչ էր: Կյանքի վերջին ամիսներին նա կատարում էր Իրանի ազգային հավաքականի մարզչի պարտականությունները:

Կարեն Ասրյանը մահացել է 2008թ. հունիսի 9-ին ուղեղի կաթվածից: Նա կյանքից հեռացել է որպես համաշխարհային օլիմպիադայի և Հայաստանի գործող չեմպիոն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 20-ի N17-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ««ԵՐԵՎԱՆԻ Հ. 171 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

««Երևանի հ. 171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

## ««ԵՐԵՎԱՆԻ Հ. 171 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

««Երևանի հ.171 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## ««ԵՐԵՎԱՆԻ Հ. 171 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաշվի առնելով միջազգային գրոսմայստեր, համաշխարհային շախմատային օլիմպիադայի չեմպիոն Կարեն Ասրյանի շախմատային ավանդը՝ «Երևանի շախմատի ֆեդերացիա» ՀԿ-ն առաջարկում է Երևանի թիվ 171 հիմնական դպրոցն անվանակոչել նշյալ դպրոցի շրջանավարտ Կարեն Ասրյանի անվամբ:

Երևանի հ.171 հիմնական դպրոցը հարցը քննարկել է դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմիններում, արժանացել հավանության:

Կարեն Ասրյանը (ծնվել է 1980 թվականի ապրիլի 24-ին Երևանում, մահացել է 2008 թվականի հունիսի 9-ին Երևանում) հայ շախմատի միջազգային գրոսմայստեր (1998), ԽՍՀՄ մինչև 10 տարեկանների չեմպիոն (1990), Հայաստանի չեմպիոն (1999, 2007, 2008), Եվրոպայի չեմպիոն (թիմային, 1999): Համաշխարհային շախմատային օլիմպիադայի բրոնզե մեդալակիր (2002), չեմպիոն (2006), աշխարհի թիմային առաջնության մրցանակակիր (2005): Առաջին կարգային դարձել է 6 տարեկանում, ինչը շախմատային աշխարհում համարվում է բացառիկ ցուցանիշ: Նա աշխարհի պատանեկան առաջնությունների արծաթե և կրկնակի բրոնզե մեդալակիր էր: 1990թ. Լենինգրադ քաղաքում անցկացվող պատանիների աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում Կարեն Ասրյանը լրացրեց վարպետության թեկնածուի նորման: Եթե աշխարհի չեմպիոններ Կարպովը վարպետության թեկնածու է դարձել 11 տարեկանում, Կասպարովը՝ 13, ապա Կարենը վարպետության թեկնածուի կոչմանն արժանացավ 9 տարեկանում: 1996-ի սեպտեմբերին նրա անհատական գործակիցը 2310 էր, իսկ ոչ լրիվ 2 տարի անց նա այն հասցրել էր 2600-ի, այսինքն վաստակել էր 290 կետ, որն արժանի էր Գինեսի ռեկորդի: 1996թ. Կարենը շախմատի աշխարհի չեմպիոն Գարրի Կասպարովի նախաձեռնած միջազգային մրցաշարվում նվաճեց «Կասպարովի Գավաթը»: 1998թ.-ից նա կրում էր գրոսմայստերի տիտղոսը: Երեք անգամ (1999, 2007, 2008) նվաճել է Հայաստանի չեմպիոնի տիտղոսը: Հաղթել է Դուբայի «Շեյխի գավաթը» (2001), «Տիգրան Պետրոսյանի» (1996, 1997, 2004) անվան և այլ միջազգային մրցաշարերում: Հայաստանի հավաքականի կազմում 2006թ.-ին Թուրինում նվաճել է շախմատի համաշխարհային օլիմպիադայի չեմպիոնի տիտղոսը: Ասրյանը համաշխարհային օլիմպիադաների (2002, 2004), աշխարհի թիմային առաջնությունների (2001, 2005) բրոնզե մեդալակիր էր, Եվրոպայի թիմային առաջնության (2007) արծաթե մեդալակիր: 1996թ.-ի երևանյան օլիմպիադայում 16 ամյա Կարենը իր խաղատախտակի վրա ցույց տված լավագույն արդյունքի համար արժանացել էր ոսկե մեդալի: Կարենը բազմիցս տեղ էր զբաղեցրել աշխարհի հարյուր լավագույն շախմատիստների ցուցակում: Այդպիսի տեղ նա ուներ նաև իր մահվան պահին, երբ նրա միջազգային վարկանիշը 2630 էր: Կարենն իր ամենաբարձր էլոյին՝

2646 հասել էր 2006թ.-ին: 2005թ.-ին Իսրայելի Բեերշեվա քաղաքում անցկացված աշխարհի թիմային առաջնությունում իր խաղատախտակի վրա գրավել էր առաջին տեղը և արժանացել ոսկե մեդալի: Իր մարզական ակնառու հաջողությունների համար Կարեն Ասրյանը պարգևատրվել էր «Մովսես Խորենացի» և բազմաթիվ այլ մեդալներով: Գործնականում լինելով անպարտելի՝ Կարենը փնտրված շախմատիստ էր թիմային մրցաշարերում: Հայաստան, Ֆրանսիա, Ռուսաստան, Իրան... ահա ոչ լրիվ ցանկն այն երկրների, որոնց ակումբները մեծագույն սիրով հրավիրում էին նրան խաղալու իրենց շարքերում և, որպես կանոն, այդ ելույթներն ավարտվում էին հաջողությամբ: Չնայած իր երիտասարդ տարիքին՝ Կարենը արդեն նաև հմուտ մարզիչ էր: Կյանքի վերջին ամիսներին նա կատարում էր Իրանի ազգային հավաքականի մարզչի պարտականությունները: 2008 թ. հունիսի 9-ին Կարեն Ասրյանը հանկարծամահ եղավ ուղեղի կաթվածից: Նա կյանքից հեռացավ որպես համաշխարհային օլիմպիադայի և Հայաստանի գործող չեմպիոն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2021 թվականի հունվարի 20-ի N17-Ն հրամանի հավելվածի 12-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթներով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ** **ՀՐԱՉՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ**